Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4419

281.64

ՃԱՌ

4419

ՀՈԳԼՈՒԱԿԱՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԵՐԵՐՁԱՆԻԿ

ԱՆՏՈՆԻ ՊԵՏՐՈՍԻ Թ.

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԻԼԻԿԻՈՑ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ

ԱՌ

ՀԱՄՕՐԷՆ ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ

ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ

ՑԱՐԳՈՅ ՔԱՀԱՆԱՅՍ ԵՒ ՄԵԾԱՐՈՅ

ԺՈՂՈՎՈՒՐԴՍ

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՍՅ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

1876

281·64
Հ-36

281 64
2-36

21

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԾԱՌԱՅ

Ա.ՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ.

ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի Ս. ԳԱՀԷՆ ՀՌՈՎՄԱՅ

Պատուական Եղբարց Մերոց Սրհ. Դեր. Սրբազանիսկոպոսաց և Եպիսկոպոսաց, Յարգոյապատիւ Քահանայից և Սիրելեալ Որդւոց Մերոց Հաւատացելոց Պատրիարքութեանս Կիլիկիոյ Ողջոյն և Աստուածային Օրհնութիւն։

Բաւական ատենէ ի վեր Պատուական Եղբարք և Սիրելի Որդեակք չի կրնալով մեր հովուական ձայնը ձեզի լսելի ընել, բազմադիմի խուռնընթաց ծանօթ անցքերէն ետեւ՝ հուսկ ուրեմն յաջողելով այս անգամ Մեր Բարեգութ Մօրը Ս. Կոյս Մարիամ Աստուածածնայ հովանաւորութեանը ներքեւ՝ դարձեալ ձեզի հետ միաբան և միասին Յիսուսի Քրիստոսի Փրկչին Մերոյ Սուրբ Ծնունդը կատարելու, Ս. Պօղոս Հեթանոսաց Առաքեալը մտքերնիս կուգայ։ Այս զարմանալի և անխոնջ Անձը՝ գրեթէ նմանօրինակ պատահարաց և փոթորկալից ալիքներու մէջ երկայն ատեն ծփելէն յետոյ՝ երբ փոքր մի անդորրութիւն գտնելով իր առ Եփեսացիս Թուղթը գրելու վրա էր՝ չի կրնալով այլ ևս պարին մէջ զգացած հեղեալ ղեղեալ միխիթարութիւ-

նը ծածկել, լիաբերան գոհութիւնս և փառս կը վերառաքէր առ մարդասէր և բարերարն Աստուած, իրեն վրա տարած խնամոց և պաշտպանութեան համար։ Առաքելոյս օրինակէն շարժեալ՝ պատշաճ կը դատինք մենք ալ Պատուական Եղբարք և Սիրելեալ Որդեակք, հրաւէր կարդալ ամենուդ, որ ամեն բանէ առաջ՝ միաբան և միաձայն բերկրեալ սրտիւ ուրախութեան և ցնծութեան երգերով՝ փառք, պատիւ, գովութիւն և շնորհակալութիւն մատուցանենք Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ՝ ամենուս վրա տարած խնամոցն և պաշտպանութեանը. վասն զի մարդասէր Փրկիչն մեր՝ որ սովոր է գորովալիր զիջողութեամբ ամեն ցաւոց դարման, ամեն նեղութեանց սփոփանք, և ամեն դժուարութեանց լուծումն շնորհելու, նոյն ինքն այնպէս լիալիր կը մխիթարէ զմեզ որ մեր այն զեղուն թաթաղուն մխիթարութեամբը՝ զայլս ևս մխիթարելու բաւական կը լլանք։ «Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայր գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեան՝ որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր առ 'ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարութեամբն՝ որով մեք մխիթարիմք յԱստուծոյ»

Չորս տարի առաջ մեր հովուական Աթոռէն, մեր Պատուական Եղբայրներէն և մեր Սիրելի Հօտէն բաժնուելով՝ զմեզ ամենքիդ թողլու հեռանալու առենիս, ոչ այնչափ մեզի հանդիպած դէպքերն, որչափ ձեր առջևն եղած ծանր ծանր վշտերը, տագնապները, և դժուարութիւններն էին, որ զմեզ առաւել ևս տրտում տխուր մտածութեանց մէջ կընկղմէին և սաստիկ կերպով մեր հայրական սիրտը կը ճմլէին։ Մէկ կողմանէ ձեզի սպառնացուած չարեաց

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
Ա. ԹԱՄԱՆՅԱՆ
84860-42
4252-Ա

ծանրութիւնը զմեզ կը տագնապէր, և միւս կողմանէ մէկզմէկ սփոփելով զիրար խրախուսելու և իրարու օգնելու խափանուած ըլլլլիս, ցաւօք և տրտմութեամբ մեր սիրտը կը լեցունէր։ Եւ ի՞նչ արդեօք այսպիսի դառն և փոթորկալից տագնապներու, և այսպիսի խիստ և ծովածուփ ալէտանջ մտածութեանց մէջ կրնար զմեզ սփոփել. բայց եթէ ձեր 'ի վաղուց հետէ այլ և այլ դէպքերու մէջ ցուցած բազմապատիկ փորձը և արիական հաստատութեան հանդէսը։ Ապահով էինք՝ որ դուք ինչպէս միշտ, նոյնպէս այս անգամ ևս թէ ձեր կրօնական պարտքերը ամենայն ճշդութեամբ և յարատև հաստատութեամբ 'ի գործ դնելու կը փութաք, և թէ մեր մեծաղօր Տէրութեան պարտուպատշաճ հպատակութիւնը, յարգը և պատկառանքը մատդրութեամբ և խղճի մտօք մատուցանելու զանցառու չէք գտնուիր. և մեր այս ձեր վրա ունեցած վստահութիւնը՝ արդեամբք և իրօք հաւատի ընելով հաստատեցիք։ Ահա՝ Սիրելիք, այս մտածութիւններն էին որ մեր տարաշխարհիկ բացակայութեան մէջ զմեզ կը սփոփէին և կը մխիթարէին։ Գովեալ և փառաւորեալ ըլլայ՝ ուրեմն, միշտ և հանապազ մեր գթալիր Մայրը Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինը, և իր հզօր բարեխօսութիւնը և բարձր հովանաւորութիւնը, զոր մեր հովուական պաշտաման առաջին օրերէն պաշտպան ընտրած էինք Աթոռոյս, և միանգամայն մեր խնամոց յանձնուած բոլոր հաւատացելոց, յանձնելով և նուիրելով ամենքիս մէկտեղ իր բարձր և առանձինն հովանաւորութեանը. ասոր փոխարէն ինքն ալ ինչպէս հանդիպած այնչափ այլ և այլ դժուարութեանց մէջ գեղեցիկ կերպով մեզ խնամարկելու զանց չէր ըրած, նոյնպէս այս անգամ ևս, գտնուած այս

դառն վիճակնուս մէջ՝ ամենքնիս ալ աղէկ կերպով պաշտպանելու բաներհաճեցաւ։ Մանաւորապէս՝ այս օրուան ամենուս վայելած այս ուրախութիւնը և ցնծութիւնը՝ անշուշտ և աներկբայ սոյն Սուրբ Մօր պաշտպանութեան արդիւնքն է։

Սակայն ասոնք յիշելով՝ դիտմունքնիս սա անցած գնացած դէպքերուն պարագայից մէջ մտնել չէ։ Ոչ՝ այս չէ մեր դիտմունքը։ Թէպէտև եթէ ուզելու ըլլայինք նոյն դէպքերը մի առ մի բացատրել՝ կըրնայինք արդարև շատ մը նիւթեր մէջ բերել, որոնք ստուգիւ ձեզի պատիւ, այլոց խրատ, և ամենուս բարի օրինակ ըլլալու ապացոյցներ էին։ Բայց այսչափ ժամանակէն ետև Աստուծոյ ողորմութեամբը նորէն մէկզմէկ տեսնալով մտէն իրար միսիթարելու առիթ եղող՝ այս ամենուս ուրախութեան օրը՝ սանկ ցաւալի նիւթ մը մեր խօսքին բնաբան առնուլը՝ մեզի անյարմար կը թուի, մանաւանդ թէ Ս. Սուրբերուն մեզի սորվեցուցածին համեմատ՝ սանկ անախորժ դէպքերը անցուշ մոռացութեան մէջ թաղելով քրիստոնէական հոգւով և սուրբ սրտիւ ջանալու ենք որ ամենքը միութեան գան, և այն ամեն բաները որ ինչ և իցէ կերպով կրնան եղբայրասիրութեան ճեռակար ըլլալ, բոլորովին մեր մտքէն հանենք։ Աներկբայ ենք որ ամենքնիդ ալ փոյդ և ջանք պիտոր ընէք, որպէս զի նորէն առաջուան պէս բոլոր աղդերնիս միասիրտ և միախոհ, ճշմարիտ ու կատարեալ հաւատով պճնեալ և դեղեցկապէս յարմարեալ և պատշաճեալ տեսնենք և միսիթարուինք, և այս ճշմարտութեան Աթոռոյն բոլորտիքը դումարեալ ամենքնիս միաբան արժանի ըլլանք գովելու և փառաբանելու զբարձեալն Աստուած՝ ուրախութեան և ցնծութեան երդն։

Ահա՝ Պատուական Եղբարք և Սիրելի ժողովուրդ։ այն ցաւալի բաժանման առաջին օրերէն 'ի վեր՝ մեզ միսիթարող ակնկալութիւնները և յոյսերը՝ ասանք էին. և այս մեր միսիթարութիւնը միշտ ընդ միշտ աւելցնելու և զօրացնելու մտադիր և փոյթեռանդն ըլլալնուդ համար, եթէ մեր առանձինն գոհութիւնը և շնորհակալութիւնը ամենուդ յայտնելու զանցառութիւն ընենք, թէ ձեզի ունեցած երախտագիտութեան պարտքերնուս, և թէ մեր անձին պատկանեալ պարտաւորութեանց՝ պակասութիւն ըրած կըլլանք։ Ի մասնաւորի մեզի պարտք և նաև պատիւ կը համարինք յայտնելու հասարակաց առջևը մեր ուրախութիւնը, գոհութիւնը և հաճութիւնը՝ որ այնչափ դժուարութեանց մէջ, Մեր Պատուական Եղբարց՝ Ս.րհի. Դեր. Ս.բ.քեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց մեծաջան փութովը և արթուն հսկողութեամբը, և Մեր կողմանէ հոս փոխանորդ կարգուած Մեծարգոյ Անձին աչալուրջ խոհականութեամբը և անխոնջ աշխատութեամբը՝ Եկեղեցական և Աշխարհական՝ ամենքնիդ ալ սիրով և միաբանութեամբ ամեն առթի անբաժան և անմոռանալի ճեռալով երբէք չպակասեցաք Ս. Եկեղեցւոյ կանոնաց և կարգաւորութեանց համեմատ իրենց օժանդակ և ձեռնտու ըլլալու, և այս ձեր անարժան հովուին ամեն տեղ և ամեն պարագայի մէջ փոյթ տարիք ցուցնելու ձեր անկեղծ սէրը, սերտ յարումը և անշեղի հաւատարմութիւնը։ Այսչափ ժամանակէ 'ի վեր հեռագիրներուն հանդիպած դէպքերուն մէջ, հաւատարիմ և հաստատուն ճեռալով 'ի հաւատս՝ ամենուն ներբողը և գովեստը ձեր վրայ հրատարակեցիք, և մեր գոհութիւնը և հաճութիւնը կրկնապատկելով՝ ձեր վրա

ունեցած համարմունքնիս և վստահութիւննիս առաւել ևս հաստատեցիք։ Նա մանաւանդ ձեր այս գեղեցիկ վարմունքը և բարի օրինակը շարժառիթ եղաւ նոյն իսկ մեր միութեան մէջ չգտնուող եղբայրներէն շատերուն, որոնք մարդկային նկատմունքները մէկդի ընելով, և իրենց անկեղծ հնազանդութիւնը և որդիական հպատակութիւնը մատուցանելով Ս. Եկեղեցւոյ՝ մեր ամենուն սփոփանայ և մխիթարութեան առիթ եղած են։

Մինչդամայն ձեր մխիթարութեան առաւելութեանը համար այս ևս կուզենք յիշեցնել որ ձեր այս ընթացքին և վարմունքին համար, բոլոր հաւատացելոց հասարակաց Հօր Սրբազան Բահանայապետին Հայրական սէրը և գոհութիւնը առաւել ևս հաստատեցիք և մանաւոր կերպով ձեր վրա հրաւիրեցիք Անոր Առաքելական Օրհնութիւնը։ Ինչպէս Նորին Սրբութեան հրահանգացը և Ս. Եկեղեցւոյ կարգաւորութեանցը ամենայն ջանիւ և անկեղծ հաւատով և վստահութեամբ համաձայնելու և հետևելու փոյթ տարիք, նոյնպէս և մեր խնամատարն եղող Օսմանեան Բարձրագոյն Տէրութեան հպատակութեան օրինաւոր պարտքերնիս հաւատարմութեամբ ի գործ դնելով, Աւեստարանական հրամանին համեմատ «Աստուծոյն Աստուծոյ և Կայսերն Կայսեր» տալու հոգ տարիք։ Ասոնց ամենուն աշխարհ համօրէն հանդիսատես ըլլալով, իրենց հիացումը և մեծարանքը զանազան առիթներու մէջ յայտնի ըրին, և ոչ այսչափ միայն այլև ձեր այս ընթացքին և վարմունքին համար Մեծազօր Տէրութեան դրուատիքն իսկ քանի քանի անգամ լսելու յաջողեցաք։ Ի մանաւորի մեր Մեծափառ և Մեծազօր Ինքնակալը իր հաւատարիմ հպատակաց նկատմամբ ունեցած բարի դիտմանցն համեմատ՝

ձեր անկեղծ հաւատարմութենէն և իր ընդարձակ բարուցը սեպհական եղող արդարասիրութենէն և արքունական գթութենէ շարժեալ Մեր Ամենազօր Աստուծոյ նաև նոյնուս շնորհիւը առիթ տուաւ բերկրեալ սրտիւ ձեր երախտագէտ զգացմանց հաւաստիքը իրեն նուիրելու։ Ուստի և Պօղոս Առաքելոյն պատուիրանին համեմատ ամեն բան մեր բարւոյն համար սահմանող, և աշխարհքիս թշուառութեանց և դժուարութեանց մէջ մեզի զօրութիւն և օգնութիւն պարգևող բարերարն և մարդասէրն Աստուծոյ կրկնենք մեր շնորհակալութիւնը, և աղերս մատուցանենք իրեն որ մեր Մեծազօր Ինքնակալին և Բարեփառ Տիրոջը յաւերժական կեանք և երջանիկ օրեր պարգևէ, և ամեն ծանրակշիռ գործոց մէջ մշանջենաւորին Աստուծոյ օգնութեան ընթացակցութեամբն յաջողի Տէրութեան բոլոր կառավարութիւնը զուարթամիտ առաջ տանելու։ Եւ Բարձրապատիւ Նախարարաց փութաջան ձեռնտուութեամբը իր ձեռաց ներքև գտնուող հպատակաց բարօրութեանը և բարեկարգութեանը համար ունեցած բարի բարի դիտմունքները կարող ըլլայ դիւրութեամբ և յաջողութեամբ ի գործ դնել, որպէս զի ամեն կարգի հրպատակք՝ Վեհափառ Ինքնակալին արքունական ալ դասէր շքովը վայելելու արժանացած շնորհքներուն յարգը և արժէքը ճանչնալով երախտագիտութեամբ և հաւատարմութեամբ իր Վեհափառութեան գոհութեանը և հաճութեանը առիթ ըլլան։

Սակայն կայ մէկ ուրիշ Նուիրական Անձ ինչ որուն մեր երախտագիտութիւնը և շնորհակալութիւնը յայտնել և իր կենաց և բարեյաջողութեանցը համար աղօթք ու աղաչանք մատուցանել մեր պարտքն է։ Խօսքերնիս՝ ամենուս յարգանացը արժանի, Պետրոս Առաքելոյն Յաջորդ, Յիսուսի Քրիստոսի երկրիս վրա Փո-

խանոյդ, ամեն հաւատացելոց հասարակաց Հօր Սրբազան Պապին վրայ ըլլալը՝ անշուշտ իմացաք։ Ս. Եկեղեցւոյ Գերագոյն Գլուխը իր լի վշաւոր Քահանայապետութեան այս երկարատև ժամանակին մէջ անօրինակ մէկ ջանքով մը, և աննման արիութեամբ կառավարած հաւատացելոց ամեն լողմ կրած այնչափ վշտերուն և տառապանքներուն մէջ, ինքը զինքը բոլոր անոնց բարւոյն նուիրած՝ ամենուն միանգամայն և ամեն մէկին առանձինն առանձինն կրած այսչափ նեղութեանց ցաւը իր հայրական սրտին մէջ կրելու ստիպուած, այս Աստուծոյ մարդն է որ թէպէտ իր կենաց 85 տարին անցուցած հասուն հասակի մէջ կը գտնուի, և այսչափ մոռատանջութեանց և չարակրութեանց մէջ կը տառապի, այսու ամենայնիւ դարձեալ միշտ առոյգ և ժիր, միշտ արթուն և զուարթուն ամեն վարմանց մէջ զուարթ և անդորր. աշխարհքիս ամեն կողմը տարածեալ համօրէն հաւատացելոց հոգևորական տեսչութեան վերաբերեալ գործոց մէջ ծագած ամեն մէկ դժուարութեանց և անոնց ամեն մէկ պատճառացը և պարագայիցը լիուլի կը տեղեկանայ, իւրաքանչիւր գործոց գլուխը գտնուող պաշտօնէից ծանօթութիւնները և կարծիքները լսելով և քննելով ամեն բան ինչպէս որ պէտք է ճշդելէն և ստուգելէն ետև ամեն բան կորոշէ ամեն բան կը կարգադրէ և ամեն դժուարութիւնները լուծելով վճիռը կուտայ, չարունակ ասանկ ծանր աշխատութեանց մէջ իր կեանքը զոհ ըրած է։ Թէ որ Աստուծոյ առանձին կերպով իր փոխանորդին օգնականութիւն և ձեռնտուութիւն ընելը ստոյգ չըլլար, անշուշտ այնպիսի իմաստութեամբ և Յիսուսի Քրիստոսի իր Ս. Եկեղեցւոյն համար դրած Աստուածային կամադրութեանցը համեմատ՝ զայն կառավարելը մարդկային հանճա-

ռով չէր կրնար ըլլալ, և ոչ իսկ հնարաւոր էր այսչափ երկայն ժամանակ ասանկ ծանր բեռներու դիմանալ։ Ուստի ամենքնիս միանգամայն շնորհակալ ըլլանք Աստուծոյ բարերար խնամոցը որ ասանկ դժուարին ժամանակի մէջ իր Եկեղեցին քաջալերելու և մխիթարելու համար այս Նուիրական Անձը իրեն Փոխանորդ կարգել հաճեցաւ, չարունակենք ուրեմն մեր աղօթքը և աղաչանքը առ Աստուած, որպէս զի երկայն և երջանիկ կեանք պարգևէ Իրեն։

Այս համառօտ ցուցակութեամբս ամենուս միխիթարութեան առիթները, և շնորհակալութեան պարտքերը յայտնելէ ետև՝ խօսքիս վերջ տալու էի։ Սակայն առեն առեն լսած ըլլալով որ կան անանկներ, որոնք ինչպէս կը կարծենք, Աստուծոյ բարձրագոյն տեսչութեան կարգադրութիւններուն աղէկ մը տեղեկութիւն չունենալով՝ իրենց բարի և ուղիղ ընթացքին հակառակ՝ դժուարութեանց մէջ իյնալու ըլլան կը տաղտկան և կը ձանձրանան. ասոնք ալ մխիթարութենէ զուրկ չի թողուլը մեր հովուական պարտքերէն ըլլալով, հարկ կը համարինք առաջիկայիս այս մեր պարտքն ալ վճարել։

Երկնից և երկրի Տիրոջ Աստուծոյ ամեն պատուիրանքները մենք 'ի գործ դնելէն ետև, փոխանակ ուրիշներէն աւելի օգնութիւն գտնելով, բարեբաղդ և հանդիստ կեանք վարելու, ի՞նչպէս կըլլայ որ ասանկ երեսէ ձգուած և ասանկ ձախող փոխարէն մը ընդունելու կը պարտաւորինք՝ կ'ըսեն. որով հետևցընել կուզեն թէ մեր գործոց մէջ Աստուծոյ Նախախնամութեան հետքն անգամ չիկայ։

Բարեբաղդաբար ասանկ մտածողներուն և խօսողներուն թիւը սակաւ է, որոնք փոխանակ Աստուծոյ Նախախնամութեան յաւիտենական կարգաւորութեանց

մտադիր ըլլալու՝ աւելի իրենց մարդկային մտածութիւններէն կը շարժին։ Ուստի այսպիսի տկարամիտ անձանց սիրտ տալու համար խօսքերնիս քիչ մընալ առաջ տանելով այս նիւթին հանդամանքը խորհրդածութեան առնունք։ Սոսկ եղբայրական սիրոյ գործք մը կատարած առենիս՝ կրնանք միանդամայն մեր հրահանգութեան համար օգտակար խրատներ հանել։

Աշխարհքիս Արարիչը և Տէրը ամէն բան վախճանի մը և բարձր ու իրեն արժանի վախճանի մը կարգած և սահմանած է։ Ամենակարողն Աստուած, մարդիկները իր փառացը համար ստեղծելով մշանջենաւոր մէկ երջանկութեան մը որոշեր է զանոնք. բայց կուզէ որ այս երկրիս վրա՝ պանդխտութեան համառօտ սահմանին մէջ, այն երջանկութեան արժանաւոր հանդիսանան։ Եւ այս վախճանին հասնելու համար՝ կարգեր կանոններ դնելով կուզէ որ մարդս իր յաւիտենական կենաց վտանդէն զգուշանալով նոյն դրուած կարգերուն հպատակ դտնուի։ Մարդը իր սովորական անհոգութեամբը վրան դրուած հրամաններուն և կարգերուն ճամբէն կը խոտորի։ Աստուած անոր վրա դթալով դարձեալ ղինքն ուղղութեան բերելու կը ղիջանի։ Սակայն ի՞նչ միջոցներով և ի՞նչ ճամբաներով։ Անշուշտ իր Աստուածային իմաստութեան համեմատ միջոցներով և ճամբաներով։ Ուստի և երբեմն մեզ կառավարելու համար ձեռք առած կերպը, խիստ կը թուի մեզի, և մեր պակասութիւններէն զմեզ մաքրելու համար գործածած փորձերը ծանր կերևնայ։ Քանի՛ քանի անդամ մարդը յանցանք կը գործէ, Աստուած ալ այն գործած յանցանացը պատճառաւ ծանր կամ թեթեւ մէկ դժբաղդութեամբ մը ղինքը կը յանդիմանէ, և զանիկա այս կողմանէ յանդիմա-

նելու և պատժելու առեն, միևնոյն ժամանակ կը բարեհաճի ղինքը խրատելու, որ արթննայ իր անհոգութեամբը ընկղմած թմրութենէն։

Աշխարհքիս վրայ այս պատժոց արժանացող և ասոնց տակ ընկնողները, միայն ծանր մեղաց տէր եղողները չեն, այլ նաև բարի և ուղղութեան տէր եղող անձինքները ևս իրենց առաքինի գնայիցը մէջ երբեմն պակասաւոր դտնուելով կը յանդիմանուին։ Սողոմոն Իմաստունը կըսէ որ «Արդարն եօթն անգամ յաւուրն անկանի» (Առակ. իա. 16.). ըսել է թէ բարի մարդն ալ երբեմն պակասութեան մէջ կը գտնուի։ Սոր հակառակ շատ չար մարդիկ իրենց այնչափ չարագործութեանց մէջ երբեմն նաև բարեգործութիւն մը կը ցուցնեն։ Եւ ինչպէս որ ասոնք այն իրենց մասնաւոր բարեգործութեանցը համար երբեմն դիւրութիւններ ստանալու արժանի կըլլան, նոյնպէս միւս բարի և ուղղութեան տէր անձինքն ևս՝ իրենց ունեցած այն մասնաւոր թերութեանց պատիժը քաշելու են։ Երբոր մեր գործած բարեգործութիւնները քիչ և փոքր՝ իսկ թերութիւնները շատ ու մեծ ըլլալով, այս աշխարհքիս մէջ յաջողութիւն և բարօրութիւն ունենանք և բնաւ ճախորդութիւն և թշուառութիւն չի կրենք, ստոյգ գիտնալու ենք որ այս անցաւոր յաջողութեանց և բարօրութեանց միջոցաւ մեր գործած այն մասնաւոր բարեգործութիւններուն բոլոր փոխարէնը հոս ընդունած ըլլալով՝ այլ անոնց համար հանդերձեալ կենաց մէջ ընդունելու հատուցում չի մնար մեզի համար։ Կամ մեծ առաքինութիւններ և շատ բարեգործութիւններ ըրած ըլլալով, եթէ ունեցած սակաւաթիւ պակասութիւններնուս այս կենաց մէջ կատարեալ հատուցում ըրած չըլլանք, մնացած պատիժները հանդերձեալ կենաց մէջ պիտոր կրենք։

Աստոր հակառակ առաքինութիւններս մեծ և պակասութիւններս փոքր ըլլալով ինչ ինչ դժբաղդութեանց հանդիպինք և մեր պակասութեանց բծերը այս երկրիս վրա սրբելու ըլլանք, մեր առաքինութեանց հատուցմունքը ղուտ և կատարեալ կառնունք հանդերձեալ կենաց մէջ։ Նմանապէս չարագործութիւն ընող մարդը, իր սակաւ բարեգործութեանց փոխարէն երբեմն ինչ ինչ յաջողութեանց հանդիպիլը տեսնելով, եթէ իր ծանր մեղքերը հոս սրբելու անհոգ դտնուի, անոնց արժանաւոր պատիժը հանդերձեալ կենաց մէջ կրելու պիտոր հարկադրուի։ Ուստի պակասաւոր ընթացք ունեցող անձին գործոց յաջողութիւնը երբոր տեսնելու ըլլանք՝ զանիկա չէ թէ երջանիկ, այլ խեղճ և ողորմելի համարելու ենք. նա մանաւանդ պէտք է կարեկցինք իրեն որ արժանացած պատժոց ամենն ալ մահուանէն ետքը կրելու պահած է։ Իսկ երբոր արդարութենէ չի հեռացող անձին դժուարին և խիստ փորձերու մէջ դրուիլը տեսնենք, անոր վիճակին նախանձելու և զինքը մխիթարելով իր բարի օրինակին համաձայն մեր կեանքը յարմարելու ենք. ինչու որ ասանկ անձինքները այս երկրիս վրա իրենց պակասութիւններէն մաքրուելով՝ ճշմարտութեան և ուղղութեան համար համբերողներուն և չարչարուողներուն պատրաստուած այն գեղեցիկ հատուցմանը արժանի կըլլան։

Աստուծոյ նախախնամութեան այս մեծ նպատակին ղէեղ աւելի ևս համոզելու համար, քիչ մնալ բաց խօսինք։ Երկբայութիւն չիկայ որ մարդիկներէն ոմանք միայն այս երկրիս վրա կը պատժուին, ոմանք այս երկրիս վրա բան մը չի կրելով հանդերձեալ կենաց մէջ կը պատժուին, ոմանք ալ՝ թէ այս երկրիս վրա և թէ հանդերձեալ կենաց մէջ պատիժ կըկրեն. Աստուծոյ անտեսութեան մէջ այս երեք դասէն դուրս ուրիշ կարգ չիկայ։ Անհնար և Աստուծոյ Նախախնամութեան տնտեսութենէն դուրս է որ մարդ մը թէ այս աշխարհքիս վրա երջանիկ ըլլայ, այսինքն՝ բնաւ վիշտ մը չի կրելով հանդիստ ըլլայ, և թէ վերջը հանդերձեալ կենաց մէջ ալ երջանկութիւն գտնէ. Պօղոս Առաքեալը այն այրի կնոջ համար «դիրդ այրին կենդանւոյն մեռեալ է» (Ա. Տիմ. ե. 6) ըսելովը՝ ասիկա իմացնել կուզէ։ Ըստ այսմ յայտնի է թէ այս երեք տեսակ անձինքներէն օ՛րուն երջանիկ ըսել պէտք է, անշուշտ անոնց երջանիկ ըսելու է որոնք այս երկրիս վրա իրենց մեղքերէն կը սրբուին, և ասոնց մէջ աւելի նեղութիւն կրողները առաւել ևս պիտոր բերկրին յաւիտենական ղուարճութեանց մէջ միշտ և հանապազ։ Թէ այս երկրիս վրա և թէ հանդերձեալ կենաց մէջ նեղութիւն կրողներուն դալով, ասոնց երկրիս վրա կրած վիշտերը նեղութիւնները իրենց պակասութեանցն համեմատ կրելու արժանացած պատժոց հաւասար չըլլան ևս, այսու ամենայնիւ նոյն պակասութեանց համար հանդերձեալ կենաց մէջ կրելիք ժամանակաւոր պատժոց չափը կը նուազեցնեն. միայն թէ այսու տարբերութեամբ՝ որ թէև հանդերձեալ կենաց մէջ իրենց կրելիք տանջանաց վերջանալուն յոյս ունին, սակայն՝ անոնք հոս գըտնուած տանջանքներուն բոլորովին աննըման և անոնցմէ անհամեմատ սաստիկ են։ Եթէ երկրիս վրա երկու արդար անձանց՝ մէկը աւելի՝ և միւսը սակաւ վիշտ կրէ, այն աւելի կրողը՝ առաւել ևս բարեբաղդ համարուելու է։ Իսկ այն անձը՝ որ երկրիս վրա կամ ամենևին վիշտ չկրելով և կամ սակաւ վիշտ կրելով իր կեանքը յաջողութեամբ և ղուարճութեանց մէջ կանցնէ, և հոգ չի տանիր իր ծանր ծանր մեղ-

քերը հոս քաւելու, նոյն մեղքերուն պատիժը՝ յաւիտենական տանջանքներով պիտոր կրէ հանդերձեալ կենաց մէջ, ուր անոնց՝ ո՛չ թեթեւնալուն և ոչ վերջանալուն հնարք կայ, և ո՛չ ինչ և իցէ կերպով ազատանաց առիթ մը։

Ուստի և այս կենաց մէջ՝ թէ որ մեղք գործելով անպատիժ մնացողները թշուառ են, ասանկները միանգամայն բարեբաղդ ևս դատուելու ըլլան՝ արդարև թշուառագոյն համարելի են. վասն զի ինչպէս որ այս աշխարհքիս վրա մեղաւորաց ընաւ պատիժ չի կրելը իրենց յաւիտենական տանջանքները կը ծանրացընէ, նոյնպէս՝ անոնց հանդուրժիւնը և զուարթութիւնը՝ առաւել ևս սաստիկ տանջանքներ պատրաստելու պատճառ կըլլայ. և եթէ կերպ կերպ յաջողութեանց հասնելով՝ Աստուծոյ բարիքները վայելած տեսնին՝ դարձեալ իրենց չար գործքերուն մէջ յաբատեւելու ըլլան, պատրաստուած կրակը և տանջանքները անհամեմատ կերպով կաւելցնեն և կը սաստկացնեն։

Դնենք որ Աստուած մեր թերութեանց ուղղութեանը համար վրանիս դիպելով՝ կեանքերնիս երկնցնէ, և մենք՝ անկէ օգուտ քաղելու տեղ՝ առաւել ևս պատժոց արժանանանք, ձեղի կը թողումք դատելը թէ՝ որչափ արդեօք մեծ և սաստիկ ըլլալու է մեր կրելու պատժոց չափը, թէ որ Աստուած՝ այս իր բարութեանը վրա նաև շատ մը պատիւներ և մեծ մեծ յաջողութիւններ առատաձեռնէ մեղի։ Ուստի եթէ այնպիսի անձանց՝ գործած բազմապատիկ մեղքերուն հակառակ պատուոյ և յարգանաց արժանանալը, և թեթև դժբաղդութեան մը անդամ չի հանդիպելով՝ յաջողութեամբ առաջ երթալը տեսնելու ըլլանք՝ մեղքերնուն համեմատ այս կենաց մէջ պատիժ չի կրելնուն համար՝ իրենց վրա ողբալու ենք։

Օրինակի համար՝ եթէ տեսնելու ըլլանք, որ ծանր հիւանդ մը՝ իր հիւանդութեան երկրնալուն վրա բոլորովին անհոգ դատուելով՝ ուտելու, խմելու և զբօսանաց ետևէ կըլլայ, անտարակոյս անոր վայելած զբօսանացն և զուարճութեանցը չի նախանձելէն զատ՝ դատուած խեղճ վիճակին վրա կարեկից ևս կըլլանք։ Ասանկ ալ հոգևոր նիւթոց մէջ տեսնելու ըլլանք որ մեղաւոր մը առանց ձախորդութեան մը հանդիպելու՝ նորանոր յաջողութեանց ու բաղդի կը հասնի և անհոգութեամբ կեանքը կանցնէ, անշուշտ անոր վրա կարեկցելու ենք. ինչու որ վերը յիշուած հիւանդին պէս, դատուած վատնդաւոր վիճակին ծանրութիւնը չըմբռներ, և նորանոր թերութեամբք իր հոգւոյն հիւանդութիւնը սաստկացնելով՝ ցանդ յոռիէն դէպ յոռեգոյն կը դիմէ։

Լալու բանը չէ թէ պատիժը այլ անոր պատճառ եղող մեղքն է, վասն զի մեղքն է որ զմեզ Աստուծոյմէ կը բաժնէ և կը հեռացնէ. իսկ պատիժը Աստուծոյ ցասումը ամոքելով զմեզ անոր կը մօտեցնէ։ Պօղոս Առաքելոյն վճիռն է, որ կըսէ « Եթէ դատիմք, ի Տեառնէ խրատիմք, զի մի ընդ աշխարհի դատապարտեսցուք » (Ա. Կորնթ. ժա. 32). ըսել է որ Աստուած զմեզ այս աշխարհքիս վրա եթէ յանդիմանելու ըլլայ, աշխարհքին հետ չի կորսուելու համար կուգայ այն խրատը։ Ասկէց սա եզրակացութիւնը կելլէ որ, այս կենաց մէջ առնուած յանդիմանութիւնը և երկրիս վրա կրուած վշտերը, նեղութիւնները, ցաւերը և անձկութիւնները՝ հանդերձեալ կենաց տանջանքներէն զմեզ կը փրկեն։ Եւ ահա այսպիսի յանցաւորաց համար ըսած է նոյն Ս. Առաքեալը « մատնել զայնպիսին սատանայի ՝ի սատակումն մարմնոյ, զի ոգին ապրեսցի

յօրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի » (Ա. Կորն. Ե. Յ.) ։ Այս ամէն բանը, և մեր թերութիւններէն ազատուելու և արդարանալու համար դրուած պատիժները, հաւասի կընեն Աստուծոյ մեր վրա ունեցած դութն և խնամքը։ Իրօք պատիժները բնականապէս վիշտ և դառնութիւն կը պատճառեն, սակայն մարդուն հոգին Աստուծոյ շնորհայ օգնութեամբը անոնց աղդեցութեանը կը յաղթէ. ասոր համար ըսեր է դարձեալ Պօղոս Առաքեալը թէ՝ ով որ կուզէ՝ ինչպէս որ պէտք է՝ Յիսուսի Քրիստոսի հետ ապրիլ՝ թող հալածանք քաշէ։

Այս ևս մտածելու ենք, որ երբ մարդիկ չի կրնան զմեզ հալածել, սատանան կերպ կերպ փորձութիւններով մեզի դէմ պատերազմ կը բանայ. մեր կեանքը՝ երկրիս վրա պատերազմ մըն է՝ ըսեր է Սողոմոն իր իմաստութեան դրքին մէջ. թէ որ այս պատերազմին մէջ յաղթող հանդիսանալ կուզենք, հանդարտ և հանդիստ կենալնիս անդէպ և անպատեհ է։ Աշխարհքիս վրա կարճատեւ նեղութեանց համբերելով, եռքը արքայութեան մէջ յաւիտենական փոխարինաց արժանի կըլլանք։ Հոս կարճ ժամանակ որչափ դժբաղդութիւն հանդիպելու ըլլայ, որչափ մտքէ չանցած դէպքեր պատահին, որչափ անձկութիւններ ծագին, այսու ամենայնիւ անոնց դէմ չի դանդատելով և անոնց վրա չի դժկամակելով, մեր օգտին համար մեզի զարնող աչը շնորհակալութեամբ համբուրելու, և զանոնք զրկողին խոնարհութեամբ երկրպագութիւն մատուցանելու համար՝ արիութիւն և հաստատութիւն հարկաւոր է՝ որ ակամայ կրելիք չարիքները, յօժարութեամբ և համբերութեամբ կրելով անոնց համար պատրաստուած փոխարէնը չի կորսընցընենք։ Եթէ անհամբերութիւն ընենք, եթէ տրտնջանք և ժդոհինք, կը թեթևնա՞ն արդեօք մեր նեղութիւնները և չարչարանքը. ո՛չ բնաւ. նա մանաւանդ առանկով աւելի ևս կը ծանրացնենք և կը սաստկացընենք մեր պատիժները։ Իսկ եթէ համբերութեամբ և անտրտունջ կրելու ըլլանք՝ Աստուծոյ ցասումը կը մեղմացնենք, պարտքերնիս կը վճարենք և թողութեան արժանի կըլլանք։ Գանգատը և տրտունջը՝ չէ թէ նեղութեանց սաստկութենէն՝ այլ դիխաւորաբար յօժարութեան պակասութենէն առաջ կուգայ. վասն զի եթէ մենք յօժարութիւն ունենանք, Աստուծոյ անմիջապ օգնութիւնը մեզի ոյժ և օգնութիւն կուտայ։

Աստուծոյ նախախնամութեան մէկ խորհուրդն է՝ որ ամէն մարդիկ այս աշխարհքիս վրա չեն պատժուիր. այլ ոմանք հոս և ոմանք հանդերձեալ կենաց մէջ։ Եթէ բոլորը յանցաւորները այս աշխարհքիս վրա պատժուելու ըլլային, մէկ մեղքով մը միայն յանցաւոր դտնուելու ատեննիս, ամենքս ալ կորսուելու էինք։ Իսկ եթէ բնաւ և ոչ մէկը այս աշխարհքիս վրա պատժուելու ըլլար, շատերը յանդգնելով և ապըստամբելով՝ Աստուծոյ Նախախնամութիւնն իսկ ուրանալու կելլէին։ Զենք կարծեր որ դուք այն մտքին տէր ըլլաք, թէ բնաւ պատիժ կրելու պատճառ մը չունիք, և չէ թէ միայն մեղքէն, այլ մեղաց բծերէն և մնացորդներէն ևս զերծ էք։ Եթէ սասանկ անմեղութեան վիճակի մէջ արդեամբ և իրօք դտնուէիք, մեր խնդակցութիւնը կը մատուցանէինք ձեզի։ Սակայն՝ նոյն իսկ այս անմեղութեան վիճակնուդ մէջ՝ Աստուծոյ Նախախնամութեան կարդադրութեանցը համաձայնելու և միշտ թշնամւոյն փորձութեանցը դէմ դիմադրելու և ամրացեալ դտնուելու համար, կը յորդորէինք՝ որ նեղութիւն կրել յանձն առնուիք։ Բայց քանի որ ամեն

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

պակասութենէ աղատ և ամեն բան ինչպէս որ պէտք է՝ ի գործ դրած ըլլալնուս մարդկային ակարութիւնը չի կրնար զմեզ այնպէս դիւրաւ համոզել. ուրեմն մեր ախտերուն բժշկութիւն, մեր ցաւերուն դարման, մեր հիւանդութեանցը առողջութիւն դտնելու, և ամեն թերութենէ և արատէ սրբուելու և մաքրուելու համար, պէտք է՝ որ նեղութիւն և չարչարանք կրելու պատրաստ դտնուելով, յանձնենք զմեզ Աստուծոյ Նախախնամութեան կարդադրութեանցը։

Արդ՝ ամփոփենք մեր առաջարկութիւնը։ Մինչև հիմա ըրած մեր պատճառաբանութենէն այս հետևութիւնը հանելու ենք, որ երբ նեղութիւն կամ դըժբաղդութիւն մը պատահի՝ ճանչնանք մեր օդտին համար մեզի զարնող Աստուծոյ աջը. և երբ ուրիշները չքեղ բաղդի հասած տեսնենք՝ ոչ միայն չի նախանցինք, այլ նաև կարեկից ըլլանք անոնց դտնուած վիճակին վրա. ինչու որ իրենց մեղաց ծանրութեան ներքև ճնշուած՝ իբր իբաղումն պարտական կը մնան Աստուծոյ արդարութեանը։ Պէտք է համոզուինք որ թէ բարեբաղդութիւն և թէ չարաբաղդութիւն թէպէտ այլ և այլ կերպով առաջ կուդան, սակայն և այնպէս՝ ամեն բան մեր բարւոյն համար կարդող Աստուածային նախախնամութեան արդիւնքն են։ Եւ Աստուծոյ այս սքանչելի գործոց հաւաստիքները դուք ևս քանի՛ քանի անդամ ձեր աչօքը տեսեր և վայելեր էք։ Մինթէ այս վշտակրութեանց և տառապանաց շահաւէտ աղդեցութիւնն և յատկութիւնը չէ՞; որով կրօնական զգացմանց մէջ թոյլ և յոյլ անձինք՝ յայտնի կերպով ոյժ և զօրութիւն ստացեր են, Աստուածապաշտութեան մէջ դաղջերը՝ հոդևորական կենաց ջերմ եռանդը ձեռք բերեր են, և հաւատոյ սկզբանց մէջ անտարբերք՝ ուղիղ դաւանութեամբ

հաստատուեր են։ Ոչ՞ ապաքէն դուք իսկ անձամբ անձին ասոր փորձը առիք, անանկ որ՝ մինչդեռ կը կարծէիք թէ Աստուծոյ նախախնամութիւնը ձեզ երեսէ ձգած է, անիկա նոյն ատեն աւելի ևս ձեզի կ՚օդնէր և զձեզ կը պաշտպանէր։ Ասոր հակառակ՝ չարաբաղդ անձը ինքը զինքը բարեբաղդութեան ծագը հասած համարելու ատեն, փոխանակ խորհելու որ Աստուծոյ նախախնամութեան երեսէն ինկնալու վտանգի մէջ է. կամ այն է որ չի հաւատար թէ մարդկային գործոց տեսուչ Աստուած մը կայ, և աշխարհքիս ամեն դաղտնեաց հսկող բարձր մէկ արդարութիւն մը կը դտնուի. և կամ այն է որ հաւատալ և միտք բերել չուզելով՝ եկած հասած վտանգին վրա բնաւ հոդ չի տանիր։

Նորոդեցէք ուրեմն ձեր կրօնական զգացմունքները. ժամանակաւոր թշուառութիւնները արդար անձին քաջասրտութիւնը պէտք չէ որ լքուցանեն, վասն զի անանկները ապագային վրա հաստատ յոյս ունենալով՝ որ և իցէ թշուառութեան մէջ՝ միշտ ուրախ և զուարթ կը դտնուին, և հանապազ մխիթարեալ՝ մանաւանդ թէ՝ այն ամեն մէկ թշուառութենէն և վշտերէն՝ մէկ մէկ չքեղ պսակ շինելու ջանք կընեն։ Աբրահամ նահապետին օրինակը մաքերնիդ բերէք. ասկա ինքզինքը Աստուծոյ նախախնամութեան կարդասորութեանցը յանձնելով՝ մէկ հատիկ զաւակը Իսահակը՝ Աստուծոյ հրամանին համեմատ՝ իր ձեռքովը զոհ մատուցանելու պատրաստ դտնուեցաւ։ Այս դէպքը մեզի համար մէկ մեծ խրատ մընէ, որ կը սորվեցնէ ամեն արարածներէն՝ ամեն աշխարհային բաներէն, մեր բոլոր գործքերէն և բոլոր անձէն՝ շատ աւելի վեր յարդ և պատիւ ընծայել Աստուծոյ հրամանին և կարդադրութեանցը։ Տեսնելով՝ որ այն ծերունին կատարեալ յանձնապարութեամբ հպատակելով Աստուծոյ

հրամանին՝ աքանչելի արիութեամբ կը ղրկէ ղինքը իր ամենասիրելի և աղնուական ստացուածքէն, իր պատուական և անգին դոհարէն, որ է իր մէկ հատիկ որդին, և մենք դարձեալ սկսինք մեր թշուառութեանցը վրա դանգատելու, որ անոր կրածին առջև շատ թեթև բաներ են, ինչ ջատագովութիւն պիտոր կրնանք արդեօք մէջ բերել։ Մաքերնիդ բերէք նաև Յովբ երանելի արդարը, որուն համբերութիւնն ալ առաջնոյն նման զարմանաց արժանի է. դէխաւորապէս յայսմ մասին՝ որ այնչափ առաքինութիւններ դործած, և աղքատներուն օդտին համար առատ նպաստներ բաշխած, խղճին դոլչելիք բնաւ պակասութիւն մը չունենալով, երբ ինք ղինք այնչափ թշուառութեանց և ղրկմանց մէջ ընկած տեսաւ, որ աշխարհքիս ամենէն վատթար մարդուն անդամ չէր հանդիպած. ոչ սրտին մէջ դժկամակութիւն մը ղդաց, ոչ ըրած բարեդործութեանցը վրա ղղջաց, և ոչ բնաւ տրտունջ մը բերնէն հանեց. այլ ամեն բան Աստուծոյ կարդադրութենէն ելլալով՝ յօժարութեամբ յանձնուեցաւ ըստ ամենայնի անոր հրամանացը։ Աստնք և ասոնց նման շատ մը օրինակներ՝ սուրբ դրոց մէջ ըստ դիպաց յիշուած չեն, հապա մեր կրթութեանը համար դրուած ելլալով՝ մէկ կողմանէ անոնց վրա զարմանալու ատեններս, միւս կողմանէ՝ երբոր առիթը հանդիպի, համբերութիւն սորվելու համար, անոնցմէ՝ հնարաւոր եղածին չափ օդուտ քաղելու ենք։

Այս համառօտ խորհրդածութիւնները բաւական համարելով՝ վերջ տանք այս մեր ճառին, որ թէ և այլ և այլ նիւթերու վրա տարածուած է, բայց և այնպէս առարկայն մի և նոյն է, և անկէց հանելիք պտուղնիս մէկ բանի մը վրա կամիոփուի, որ է

Աստուածային նախախնամութեան մարդասիրութեամբ՝ ի դործ դրած այն կարդադրութիւնը և խնամակալութիւնը, որ աշխարհքիս ամէն դէպքերը իր նպատակին կուղղէ, և այն դէպքերէն օդուտ քաղել ուղղողներն՝ իրենց համար սահմանուած մշանջենաւոր վարձանին կառաջնորդէ։

Ի վերջ բանիս, նպատակնուս ամփոփումը առաւել ևս պնդելու համար, մեր նուիրական պաշտման պարտուցը համեմատ՝ մէկ անդամ մը ևս մեր վչտաբեալ սրտին դորովագին ձայնը, ներուին ըրէք՝ որ ձեզի ուղղենք, ինչ կարդի և ինչ ատիճանի մէջ այժմ գտնուիք՝ դուք՝ որ երբեմն մեր պատուական եղբայրներն և սիրելի որդիքներն էիք, մեջերնիս բնաւ խրատութիւն չընդունելով մեկզմեկ կը մխիթարէինք և կը սփոփէինք, և իրարու կ՚օդնէինք, և մեր դթած Տ՝ Կոյս Մարիամ Աստուածածնայ հովանաւորութեանը տակ՝ Ս. Եկեղեցիներնուս մէջ՝ սեղաններու առջև՝ դոհ սրտիս և միաբան հոդւով միաձայն մեծին Աստուծոյ դովութիւնն և օրհնութիւնը կ՚երդէինք։ դուք ժամանակէ մը ի վեր մեզմէ հեռացած, Ս. Եկեղեցիներնուս մէջ ձեր աթոռները անհետ եղած և ձեր նստարանները թափուր մնացած, դուք հիմակ ո՞ւր էք, ո՞ր տեղեր կը դտնուիք. մեզմէ զատուած, մեզմէ հեռացած, ի՞նչու տրտում կը թողուք այս բարի հօտը։ Փարախէն ելած, հօտէն բաժնուած դառի հօտը։ Գոնուկին կարօտովը՝ հետքը դիտելով՝ լեռներ, ձորեր, անչէն ամայի անապատներ զանի վնտռելու ելած սրբանչէն հովուին նման՝ հեռաւոր երկրէ և տարաշտակեզ հովուին նման՝ հեռաւոր երկրէ և տարաշտակեզ հովուին նման՝ վաղեր եկեր եմ ղձեզ փընտրելու, ղձեզ դարձեալ այս փարախը հրաւիրելու՝ ո՞վ Աստուծոյ Միածնին անգին արեամբը գնուած՝ Թանկագին եղբայրներ։ Մինչև ցե՞րբ փարախէն հեռ-

ռու կենալով մեր սիրտը պիտոր ճմլէք, այս բարի հօտը ի սուգ համակէք, և բոլոր մեր եղբայրները տրտմութեան մէջ թողուք։ Անհնար է որ այս ձեր առանձնացած և չփոթ վիճակը զձեզ իսկ գոհ ընէ, և ասանկ մնալով՝ կարող ըլլաք մէկզմէկ միխիթարել և իրարու օգնութեան հասնիլ։ Զենք կարծեր՝ որ նոյն իսկ դուք համոզուած ըլլաք՝ թէ այդ ձեր դանուած անտեղի պայմանը՝ կարող է ձեզի հոգևոր և կամ մարմնաւոր բարեբաղդութեան և երջանկութեան առիթ ըլլալ։ Ձեր բարեբաղդութիւնը և անդորրութիւնը այն ատեն միայն կրնաք ձեռք բերել, երբոր Ս. Եկեղեցւոյ պարտ ու պատշաճ եղած հպատակութիւնը մատուցանէք և անոր հետ միութիւնը արդիւնաւորէք։ Ահա այս է մեր փոյթը և ջանքը։ Այս է նաև բոլոր հաւատացելոց Գերագոյն Հօր՝ Սրբազան Քահանայապետին ակնկալութիւնը և փափաքը։ Դուք անոր այս ջանքն ու փոյթը՝ արդէն շատ անգամ ձեզի ըրած հայրական հրաւէրներէն՝ իմացած էք։ Անանկ որ՝ ասով միայն, թէ նոյն Ս. Հօր վշտացեալ սիրտը կը միխիթարուի, և թէ մեր ու բոլոր հօտիս գոհութիւն կը պատճառի։ Պօղոս Առաքելոյն հետ կը համարձակիմ զձեզ ապահովելու՝ որ մեր նպատակը այս է միայն, «զի ընտրեալ զմեզ Աստուած ի սկզբանէ ի փրկութիւն սրբութեամբ հոգւոյն և հաւատովքն ճշմարտութեան»։ Այս է մեր միակ բաղձանքը. մարդկային նկատմունք կամ մատմունք մը չունինք. յաւիտենական մատութեամբք զբաղելով՝ ժամանակաւոր նկատմունքները և մատմունքները մեր առջև բնաւ արժէք մը չունին. մեզի համար ոչինչ են անոնք։

Օ՜ն ուրեմն, Սիրելիք, մեր խօսքին վրա վստահ ըլլալով՝ անօգուտ ակնածութիւնները և անհարկաւոր դժուարութիւնները՝ եթէ կան, քաջութեամբ մէկդի

ընէք։ Մարդուն ամենէն մեծ յաղթութիւնը՝ իր անձին իշխելով՝ զանիկա զսպելն է. և Քրիստոնէին փառքը՝ իր փրկութիւնը ապահովելու համար՝ անտեղի մըտածմունքները մէկդի ընելով՝ անարժան կրքերը մահացնելն է։ Ահա այս կերպով՝ ձեզմէ քանի՛ քանի անձինք, յաւիտենական վարձուց ակնկալութեամբ և Ս. Եկեղեցւոյ քաղցր և շահաւէտ կարգաւորութեանցը համեմատ ընթանալով՝ այս պատուոյն արժանացան, և հիմակ մեզի հետ միկտեղ Ս. Եկեղեցւոյ մէջ՝ մեծաւ գոհութեամբ՝ Աստուծոյ փառք, պատիւ և շնորհակալութիւն կը մատուցանեն։ Եթէ դուք ևս կուզէք այս պատուոյն արժանանալ, անիկա՝ ձեր անկեղծ վստահութենէն կախուած է։ Անգամմը արիութեամբ ձեր անձանց բուռն ընելու ըլլաք՝ մեր ձեռնտուութեամբն ևս՝ կարող կըլլաք ամեն դժուարութիւնները դիւրութեամբ լուծելու։ Այս է մեր ձեզմէ ըսպասածը, և այս է գլխաւորաբար այսօր Ս. Սեղանոյն առջև մեր աղերսն ու աղաչանքը առ Բարձրեալն Աստուած։

Ի վախճանի՝ Պատուական Եղբարք և Սիրելի Ժողովուրդ, միւսանգամ ձեզի դառնալով՝ այս նուիրական տօնախմբութեանս ատեն, ամենքնիս միաբան՝ եռանդագին սրտիւ աղերս մատուցանենք բարերարին Աստուծոյ, որ երբէք որ և իցէ բարիք անվարձ չթողուր, որպէսզի աղդեցութիւն և զօրութիւն շնորհէ ճառիս առաջարկութեանը, եղմեզ արժանի ընէ այն երկնաւոր առատաբաշխ օրհնութեանը, զոր բոլոր հաւատացելոց հասարակաց Հայրը Սրբազան Քահանայապետն Պիոս Թ. իրեն՝ ողջոյն հրաժեշտի տուած ատենին՝ մասնաւոր կերպով յանձնեց մեզի, և զոր՝ Անոր սուրբ աղօթքովը՝ ողջամբ մեր Աթոռը դառնալով՝ այս շքեղ հանդիսութեանց առթիւը կու-

տանք ձեզի նոյն հայրական սրտի զեղմամբ, որով ինքն Սրբազան Քահանայապետն շնորհեց զայն ամենուդ իբր հաւատիք իր ձեր վրա ունեցած գոհութեանն և հաճութեանը, և իբր ի դրաւ և յառհաւատչեայ անվախճան վարձուց, զոր Ամենազօրն Աստուած իր անհուն գթութեամբը պատրաստեր է անոնց՝ որոնք բոլոր սրտանց զինքը կը սիրեն, հաւատարմութեամբ իրեն կը ծառայեն, և իրենց կենաց մինչև վերջին վայրկեանը՝ բոլոր զօրութեամբ զինքը գոհ ընելու կը ջանան։

Տուեալ ի Կաթողիկոսարանի մերում ի Բերա Կ=Պոլիս Յամի Տեառն 1876. Դեկտեմբեր 25. Մեր Կաթողիկոսութեան Տասներորդ Տարին.

ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ.

Պ. Կ.

2002

4419

Printed in Turkey

Printed in Turkey

4280